http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Համարը	N 415-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2016.04.28/35(1215) Հոդ.368	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	28.04.2016
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	28.04.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.05.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա», 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016 թվականի N 415-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N 846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N 1325-Ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N 946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 846-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 13-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների)՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 11-ի N 1406-Ն որոշմամբ հաստատված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքը և այդ դիրքում ներառված՝ փաստացի վաճառված ապրանքի անվանումը,

բ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 875-Ն հրամանով հաստատված՝ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) (այսուհետ՝ դասակարգիչ) 4-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ծառայության կոդը (4 նիշը) և այդ կոդում ներառված՝ փաստացի մատուցված ծառայության անվանումը:

Սույն ենթակետի կիրառության իմաստով, եթե հարկ վճարողի իրացումից հասույթը որևէ տարվա արդյունքներով գերազանցել է 58.35 մլն դրամի շեմը, ապա այդ պահից սկսած՝ կիրառվում է սույն ենթակետով սահմանված պահանջը՝ անկախ հարկ վճարողի՝ հետագա տարիների իրացումից հասույթի մեծությունից.»,

բ. 13-րդ կետի 20-րդ ենթակետում «կանխավճարների ստացման,» բառերը փոխարինել «կանխավճարների ստացման, ապրանքի հանձնումից կամ ծառայության մատուցումից հետո վճարումների ընդունման, ինչպես նաև» բառերով,

գ. 13.1-ին և 13.2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 40-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի չմուտքագրումը կամ արժեքից ցածր արժեքի մուտքագրումը.

http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

4) գնված ապրանքի քանակի չմուտքագրումը կամ դրանից փոքր քանակի մուտքագրումը՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար.»,

բ. 40-րդ կետի 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 40-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին ենթակետով.

«5.1. Նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀՊՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքում չներառված ապրանքի անվանման տպագրումը,

բ. ՀՊՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչով սահմանված ծառայության կոդում (4 նիշում) չներառված ծառայության անվանման տպագրումը,»,

դ. 40-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) ՀՊՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀՊՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքից տարբերվող ԱՏԳ ԱԱ այլ դիրքում ներառված ապրանքի անվանման մասին տեղեկության ուղարկումը հարկային մարմին,

բ. ՀՊՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչի համապատասխան կոդից (4 նիշից) տարբերվող ծառայության անվանման մասին տեղեկության ուղարկումը հարկային մարմին:»,

ե. 41-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) որոշման N 1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված տվյալների բացակայությունը՝ «կանխավճար» գրառում ունեցող ՀՊՄ-ի կտրոնների համար.»,

զ. 41-րդ կետի 2.1-ին ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա», 2-րդ ենթակետի «գ» և «դ» պարբերությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Հ. Աբրահամյան**

2016 թ. ապրիլի 28
Երևան